Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության կառավարության
2023 թվականի
_____ __-ի N___-Ա որոշման

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԻ 02-017-0140-0147 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ, ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՃԱՆԱՊԱՐՀ, ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊ, ՖԻՔՍՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խմելու ջուր

1. Խմելու ջրով ապահովման համար անհրաժեշտ է կառուցել 5,300 մ երկարությամբ 75մմ տրամագծով ջրագիծ, որից 3,200 մետրը 8 մթն. PE խողովակով, իսկ 2,100 մետրը՝ 10 մթն. PE խողովակով:
2. Խմելու ջրագիծն անցնում է ամբողջությամբ համայնքային հողամասերով կամ պետական ճանապարհի երկայնքով:
3. 02-017-0140-0147 կադաստրային ծածկագրով հողամասը նախատեսված է ծառայելու որպես մթերման, պահեստավորման և վերամշակման գոտի:
4. Խմելու ջրագծի ընդհանուր արժեքը կազմում է **21,437,400** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

Անվանում	Քանակ	Չափի միավ.	Միավորի արժեք, ՀՀ դրամ	Գումար, ՀՀ դրամ՝ Ներառյալ ԱԱՀ
Խողովակ 90մմ 8 մթն	3,200	մետր	1,035	3,312,000
Խողովակ 90մմ 10 մթն	2,100	մետր	1,274	2,675,400
Խողովակների միացման աշխատանքներ	320	հատ	5,000	1,600,000
Հողային աշխատանքներ	5,300	մետր	2,500	13,250,000
Օդաթող օդահան սարք/վանտուզ/	10	հատ	60,000	600,000
Ընդամենը				**21,437,400**

Քարտեզ 1. Խմելու ջուր



Ասֆալտապատ Ճանապարհ

1. Հողամասի հեռավորությունն ասֆալտապատ ճանապարհից կազմում է 1,520 մետր: Բնականոն գործունեությունն ապահովելու համար ճանապարհի լայնությունը նախատեսվում է կառուցել 7 մետր, իսկ ասֆալտը բաղկացած է հետևյալ շերտերից. 4 սմ մանրահատիկ ասֆալտ, 6 սմ կոպիտ-հատիկավոր ասֆալտ, գլինցովկա (մանր մանրախիճով ցողված բիտում), 22 սմ մանրախիճ, 20-25 սմ ավազակոպչային նախապատրաստում՝ ռելիեֆը հարթեցնելու և թեքություններ ստանալու համար:
2. 02-017-0140-0147 կադաստրային ծածկագրով հողամասը նախատեսված է ծառայելու որպես մթերման, պահեստավորման և վերամշակման գոտի:
3. Մեկ քառակուսի մետր ասֆալտի ճանապարհի արժեքը կազմում է 18,000 ՀՀ դրամ: Ընդամենն անհրաժեշտ է կառուցել 1,520 x 7 = 10,620 մ^2 ասֆալտապատ ճանապարհ, որի արժեքը կկազմի **191,520,000** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Քարտեզ 2. Ասֆալտապատ Ճանապարհ



Բջջային հեռախոսակապ

1. Բջջային հեռախոսակապի ապահովման համար անհրաժեշտ է կառուցել աշտարակ և բազային կայան:
2. Աշտարակը և բազային կայանը նախատեսվում է կառուցել «Սմարթ Ագրո Սոլուշընս» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 02-017-0160-0274 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում, որի համաձայնությունն առկա է/ կցված է/:
3. Աշտարակի և բազային կայանի անհրաժեշտ սարքավորումների արժեքը կազմում է 32,000,000 ՀՀ դրամ: Աշտարակը հոսանքով ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել նաև 200 մետր երկարությամբ հոսանքի գիծ և տեղադրել ենթակայան 250/10 (ԼՏԵ): Բջջային հեռախոսակապով ապահովման ծախսերը կկազմեն **38,500,000** ՀՀ դրամ:

Անվանում	**Քանակ**	**Չափի միավ.**	**Միավորի արժեք, ՀՀ դրամ**	**Գումար, ՀՀ դրամ՝ Ներառյալ ԱԱՀ**
Աշտարակ	1	հատ	32,000,000	32,000,000
Հոսանքի գիծ	200	մետր	5000	1,000,000
Ենթակայան 250/10 (ԼՏԵ)	1	հատ	5,500,000	5,500,000
Ընդամենը				**38,500,000**

Քարտեզ 4. Բջջային հեռախոսակապ



Ֆիքսված ինտերնետ կապ

1. Ֆիքսված ինտերնետ կապով ապահովման համար անհրաժեշտ է կառուցել օպտիկամալուխային ցանց:
2. Ինտերնետ կապի միացման ամենամոտ կետը գտնվում է Խոյ համայնքի Արագած գյուղում: Այն անցնում է համայնքի բնակելի տարածքով, համայնքային հողամասերով:
3. Ենթակառուցվածքի շինարարությունը ավարտվում է «Ագրոպրո» ՓԲԸ-ի հողամասով (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0140-0147):
4. Միացման կետից հեռավորությունը կազմում է 5,050 մետր: Ենթակառուցվածքի կառուցման ընդհանուր գումարը կազմում է շուրջ **12,000,000** ՀՀ դրամ:

Քարտեզ 5. Ֆիքսված ինտերնետ